

434

H-muon in np  
4rho Gf

1915

F. muon.

2(075)  
U-15

P. 1915

5746  
1916 № 732  
Р. А. Смирнов  
фл. шщ.

ԴԱՎԻՏԵՏՐ  
ԿՐՈՆԻ

(133)



Առաջին մաս  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
Ինститուտ  
Կոնֆլիկտագույն  
գիտութեան  
ակադեմիա  
ԽՍՀՄ

Տ 2001

2(075)  
U-15

2011

С арм-и  
5771

Բ. տարի  
ԺԶ. տակ.

# ԴԱՍԱՏԵՏՐ

2(075)

Ա-15

# ԿՐՈՆԻ

Հ Պ Ա Յ Ֆ Հ Ա Յ

ՊԵՏԱԿԱՆ ԳԳԲԱՑԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՇԽԱՑԱԿՐԵՎ

Հ Պ Ա Յ Ֆ Հ Ա Յ  
Ի Ն Ս Ի Ւ Թ Ա  
Վ Ո Տ Ո Խ Ե Ճ Ա  
Լ ա յ ն ա ն ա ս ւ ա կ  
С С Р

Ս Պ Հ Ա Կ Ա Խ Ա Հ Ա Կ Ա Կ Ա Կ Ա Կ Ա Կ

Թ Ի Ֆ Լ Ի Ֆ  
Տ պ. Ա յ ո տ ի ն ե մ ն ց ի  
1 9 1 5


Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

**S. S. ԳԵՂՈՐԳ Ե.**

Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց, ծայրագոյն Պատրիհարքի Համազգական նախամեծար Արարատեան Առաքելական Մայր Աթոռոյ Սրբոյ  
Կաթողիկէ Էջմիածնի:



36109-66



I

**1. Ա Ղ Օ Թ Ք Ճ Ա Շ Ի Ց Ա Ռ Ա Զ**



աշակեսցուք խաղաղովթեամբ ըդկերակուրս, որ պատրաստեալ է  
մեզ 'ի Տեառնէ 'ի պարգևս իւր. ամէն:

Խաղաղովթեամբ ճաշակենք Աստծուց պատրաստած  
կերակուրը, օրհնեալ է Աստուած իւր պարգեներով. ամէն:

**2. Ա Ղ Օ Թ Ք Ճ Ա Շ Ի Ց Ե Տ Ո Յ**

Չլիութիւն սեղանուս անհատ և աննուազ  
արասցէ Փրիստոս Աստուած մեր, որ

50695-Ա. հ.

զմեղ կերակրեաց և լիացուց՝ նմա փառք  
յաւիտեանս. ամէն:

Ով մեր Քրիստոս Աստուած, լի և առատ ա-  
րա այս սեղանը. քեզնից յաւիտեան չնորհակալ  
ենք, որ մեղ կերակրեցիր և լիացրիր. ամէն.




II

### ՅԻՍՈՒՍ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐ

**Մ**ի քանի որդեսէր մայրեր հաւատա-  
ցած էին, որ եթէ Յիսուս իրանց  
որդւոցն օրնէ, բաղգաւոր կլինեն,  
ուստի վեր առան իրանց փոքրերին և Յիսուսի  
մօտ բերին՝ հէնց այն ժամանակ, երբ նա ճա-  
նապարհորդութիւնից նոր էր վերադարձել և  
յոդնած էր:

Աշակերտները մայրերին արգելում էին և ա-  
սում—մեր ուսուցիչը յոդնած է, թողէք որ հան-  
գըստանայ, մի նեղացնէք նրան:

Յիսուս, երբ այս բանը նկակեց, գարձաւ ա-  
շակերտներին և ասաց. «Թողէք մանուկներին,  
մի արգելէք գրանց ինձ մօտ գալու, որովհետեւ  
Աստծու թագաւորութիւնը դրանցն է պատկա-  
նում: Ճշմարիտն եմ ասում ձեզ—ով մանուկ-



Ների նման մաքուր սիրտ կունենայ, նա միայն  
կարող է մտնել իմ հայր Աստծու թագաւորու-  
թիւնը»:

Սրանից ետոյ Յիսուս գրկեց մանուկներին,  
սիրեց, ձեռը գլխներին դրաւ և օրհնեց նրանց:

Փոքրիկ մանուկներ, եթէ դուք էլ Յիսուսի  
քարոզածները լաւ սովորէք և կատարէք, դուք  
էլ կգնաք Աստծու թագաւորութիւնը՝ դուք էլ  
բաղդաւոր մարդիկ կլինէք:

#### 4. ԱՅՐԻ ԿՆՈՉ ԼՈՒՄԱՆ —

**Մ**ի անգամ Յիսուս տաճարում քարոզում-  
էր, նայեց իւր շուրջը և տեսաւ, որ հարուստ-  
ները մեծ-մեծ փողեր են ձգում գանձանակում,  
որպէսզի մարդիկ տեսնեն և գովեն իրանց: Տա-  
ճարում մի այրի, աղքատ կին ջերմեռանդ կեր-  
պով ազօթում էր: Յիսուս նկատեց, որ այս  
կինը երկու լումա ( $մօտ 1/3$  կոպ.) ձգեց գան-  
ձանակում: Այս բանը ոչ ոք չտեսաւ: Յիսուս,  
որ ամեն բան գիտէր, նկատեց և ասաց. «Ճըշ-  
մարիտն եմ ասում ձեզ—այս որբեայրի կինը  
ամենից շատ տուաւ, որովհետեւ հարուստներն  
իրանց աւելորդ ունեցածից Աստծու համար զոհ

բերին՝ գանձանակ ձգեցին, իսկ սա իր աղքան



տեղովը բոլոր ունեցածը ձգեց»։ Նրանք փառա-

սիրութեան համար ձգեցին, իսկ սա՞ սրտանց տուաւ։

Փոքրիկ մանուկներ, դուք փող չունէք, որ գանձանակ ձգէք՝ Աստծու համար զոհ բերէք։ Եթէ դուք էլ ձեր գասերը լաւ սովորէք, ձեր ծնողներին պատուէք, ձեր ընկերներին սիրէք, լաւ բարք ու վարք ունենաք... այս բաներն էլ ձեր գանձանակը՝ ձեր զոհը կլինի։ Յիշուս ձեր արածն էլ կնկատէ, կդովէ և կօրհնէ ձեզ։

### 5. ՏԱՄՆ ԿՈՅՍԵՐԻ ԱՌԱԿԸ

Հրէաստանում մի անգամ մի հարսանիք կար գիշերով։ Հարսի ընկերուհիներից տասը կոյս՝ չըպսակուած աղջիկ իրանց լապտերները վեր առան և հարսի հետ միասին գնացին փեսայի տուաջ։

Նրանցից հինգը յիմար, այսինքն անզգոյց էին, իսկ հինգը՝ իմաստուն, այսինքն զգոյց էին։ Յիմարները մոռացան իրանց լապտերների հետ աւելորդ ձէթ վերցնել, իսկ իմաստունները վերցրին, որ եթէ փեսան ուշանալու լինի, լապտերները նորոգեն։

Հրէաստանի սովորութիւնն այսպէս էր, որ


հարսը և փեսան իրանց բարեկամներով և ընկերներով փողոցումն էին պատահում իրար—ետոյ փեսան հարսին տուն էր տանում:

Փեսան ուշացաւ և ամենի քոնքը տարաւ փողոցում: Կէս զիշերին ձայն լսուեց, թէ փեսան գալիս է, կոյսերը վերկացան և տեսան, որ լապտերները հանգչելու վրայ են: Իմաստուններն իսկոյն աւելորդ ամանով վերցրած ձէթիցն ածեցին լապտերների մէջ և նորոգեցին, իսկ յիշմարները շփոթուած դիմեցին իմաստուններին և ասացին. «Ձեր ձէթիցը մի քիչ էլ մեզ տուէք, մեր լապտերները հանգչում են»: Իմաստունները պատասխանեցին և ասացին. «Եթէ մեր ձէթիցը ձեզ էլ տանք, էլ մեզ բաւական չի լինի—թէ ուզում էք, գնացէք ձէթ ծախողների մօտ և գնեցէ՛ք».

Երբ յիմար կոյսերը ձէթ առնելու գնացին, փեսան տեղ հասաւ, իմաստուն կոյսերին հետն առաւ, հարսանքատուն տարաւ, դուռը կողպեց և սկսաւ ուրախանալ հիւրերի հետ:

Անզգոյշ կոյսերը ևս ձէթ առնելուց ետոյ՝ հարսանքատուն եկան, դուռը ծեծեցին և ասացին. «Ձէք, բաց արա դուռը»: Փեսան պատասխան տուաւ նրանց և ասաց. «Ես ձեզ չեմ ճանաչում», հեռացէ՛ք և դուռը բաց չարաւ:

Անզգոյշ կոյսերը մնացին դուրսը, ցրտից դող-



դողում էին և լաց լինում—նրանք լսում էին փողոցից, թէ ինչպէս իմաստուն կրյսերն ուրախանում են փեսայի հետ:

Փոքրիկ մանուկներ, գուք էլ իմաստուն կոյսերի նման զգոյշ եղէք ամեն բանում, յիմարների նման անզգոյշ մի եղէք—ձեր դասերը միշտ պատրաստեցէք, ամեն օր աղօթեցէք, միշտ սրտով մանուկներ եղէք...

#### 6. ՈՂՋՐՄԱԾ ՍԱՄԱՐԱՅՈՒ ԱՌԱԿԵ

Յիսուս մի օրէնք հասկացող մարդու այս տռակը պատմեց:

Մի մարդ երուսաղէմից զնում էր Երիքով քաղաքը: Ճանապարհին աւագակների ձեռն ընկաւ: Սրանք կողոպտեցին անծանօթին, վիրաւորեցին, կիսամահ թողին և փախան:


Պատահմամբ մի քահանայ այդ ճանապարհով անցաւ, տեսաւ վիրաւորուածին, բայց ոչինչ չարաւ—անցաւ ու գնաց: Նոյն տեղով անցաւ մի զետուցի (զպիր՝ տիրացու) ևս: Սա էլ տեսաւ աւագակների ձեռն ընկած մարդուն, բայց չօգնեց—անցաւ ու գնաց:

Եկաւ մի սամարացի ճանապարհորդ: Երբ սատեսաւ վիրաւորուածին, խղճաց—իսկոյն իջաւ գրաստից, վէրքերի վրայ ձեթ ածեց, փաթաթեց, զինի խմացրեց, որ ուժի գայ, գրաստի վրայ դրաւ և տարաւ մօտիկ իջեանը:

Միւս օրը, երբ պէտք է հեռանար, երկու գահեկան (գահեկանը 60 կպ.) տուաւ իջեանի տիրոջն ու ասաց. «Խնամք տար սրա վրայ և եթէ աւելի ծախս անես, վերադարձիս կվճարեմ»:

Սը անից ետոյ Յիսուս հարցրեց օրինականին. «Այս երեքից որն է ընկերաբար վարուել աւագակների ձեռն ընկած մարդուն»: Օրինականը պատասխանեց. «Նա, որ ողորմութիւն—արաւ՝ օգնեց»: Այն ժամանակ Յիսուս ասաց. «Քնա, գու էլ այնպէս արա, եթէ ուզում ես Աստծու թագաւորութիւնը գնալ:

Փոքրիկ մանուկներ, երբ մէկին նեղութեան մէջ տեսնէք՝ սամարացու նման վարուեցէք, քահանայի և զետացու պէս անսիրտ մի լինէք: Ով որ էլ լինի նեղութեան մէջ եղողը, նա ձեր ընկերն է—նրան պէտք է սիրէք սամարացու նման և օգնէք՝ ինչով կարող էք:



7. ՍԵՐՄԱՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԼ

Գալիլիայի ծովի ափին Յիսուս այս առակը պատմեց ժողովրդին—

Մի սերմնացան դուրս եկաւ ցորեն ցանելու։ Յանելիս սերմերից մի քանիսն ընկան ճանապարհի վրայ, ուր հողն ամհուր էր—սերմերը դուրսը մնացին, չմտան հողի մէջ, ուստի թըռչունները եկան և կերան։

Սերմերից մի քանիսն էլ ընկան քարքարոտ տեղ, ուր հողի շերտը բարակ էր։ Նրանք թէն շուտով կանաչեցին, բայց երբ արեր դուրս եկաւ, տաքացրեց, արմատները չորացան, որովհետեւ խորը չէին գնացել, արեի տաքութեանը չդիմացացան։

Մի քանիսն էլ ընկան փշոտ հողի մէջ։ Ցորենն էլ փշերն էլ միասին կանաչեցին, բայց փշերը խեղղեցին և չթողին, որ պտուղ տան, որովհետեւ հողը մաքուր չէր։

Իսկ մի քանիսն էլ ընկան լաւ հոգի սէջ, ուր շերտը փափուկ էր, հաստ և մաքուր։ Ահա այս սերմերը միայն կանաչեցին և պտուղ տուին, որը սէկին հարիւր, որը վաթսուն և որը երեսուն։



Փոքրիկ մանուկներ, ձեր կրօնի ուսուցիչն աշեն օր ձեր սրտերսւմ բարի սերմեր է ցանում: Դուք էլ աշխատեցէք ձեր սրտերը փափեացնել, փշերից մաքուր պահել, որ ուսուցչի ցանած սերմերը պտուղ տան:

#### 8. ՔԱՆՔԱՐՆԵՐԻ ԱՌԱԿԸ


ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻՆՍՏԻՏՈՒ  
ՎԱՍՏՈԿՈՎԵԴԵՆԻ  
Պահումն Խայ  
ՀՀ

Մի հարուստ մարդ օտար երկիր էր գնում, կանչեց ծառաներին և իւր փողերը նրանց յանձնեց—մէկին հինգ քանքար (10,000 ռբլ.) տուաւ, միւսին՝ երկու (4,000), իսկ երրորդին՝ մի (2,000)—իւրաքանչիւրին իւր ընդունակութեան համեմատ:

Հինգ քանքար ստացողը գործ դրաւ փողը և նրանով ուրիշ հինգ քանքար ևս շահուեց: Նոյնպէս և երկու քանքար ստացողը գործ դրաւ և երկու քանքար աշխատեց: Իսկ մի քանքար ստացողը փողը գործ չդրաւ, այլ գետինը փորեց ու տիրոջ քանքարը թաքկացրեց.

Մի քանի ժամանակից ետոյ տէրը վերադարձաւ և նրանցից հաշիւ պահանջեց: Հինգ քանքար ստացողն եկաւ և այսպէս հաշիւ տուաւ—«Տէ՛ր, ինձ հինգ քանքար տուիր. փողը գործ դրի, հինգ քանքար ևս աշխատեցի—ահա քեզ

2



36109-66

տասն քանքար»։ Տէրը գովեց նրան և ասաց։ «Շատ լաւ, բարի և հաւատարիմ ծառայ, որովհետեւ քիչ բանի մէջ հաւատարիմ գտնուեցար, շատ բաների վրայ կառավարիչ կնշանակեմ քեզ։ Իմ գալստեան պատճառով հրաւէր ունիմ՝ միմիւայն իմ բարեկամների համար, բայց դու ևս կարող ես մասնակցել»։

Մօտ եկաւ երկու քանքար ստացողն ու ասաց։ «Տէ՛ր, դու ինձ երկու քանքար տուիր. անա ուրիշ երկուսը ևս աշխատել եմ դրանով»։ Տէրըն ասաց նրան. «Շատ լաւ, բարի և հաւատարիմ ծառայ, որովհետեւ գու քիչ բանի մէջ հաւատարիմ գտնուեցար, շատ բաների վրայ կառավարիչ կը նշանակեմ քեզ—դու ևս կարող ես մասնակցել իմ գալստեան պատճառով պատրաստուած հրաւէրին»։

Մօտ եկաւ մի քանքար ստացողն ու ասաց. «Տէ՛ր, ես զիտէի, որ դու խիստ մարդ ես, հընձում ես այնտեղից, ուր չես ցանել և հաւաքում ես, ուր չես փոել, ուստի վախեցայ քեզնից և քո քանքարը գետնի մէջ թափկացրի—ահա քեզ ոս տուածը»։ Տէրը բարկացաւ և ասաց. «Չար և վատ ծառայ, երբ դու զիտէիր, որ ետ ննձում եմ այնտեղից, ուր չեմ ցանել և հաւաքում, ուր չեմ փոել, ինչու առաջուց չյանձնեցիր իմ փողը սեղանաւորին, որ ես այժմ տո-

կոսով ստանայի նրանից, Առէք դրանից այդ մի քանքարն էլ և տուեք տասը քանքար ունեցողին, իսկ իրան պատժեցէք—ձգեցէք մութը և



ցուրտ սենեակը, թող այնտեղ լայ և ատամները կրմացնէ»։

Փոքրիկ մանուկներ, Աստուած ձեզ տուել է տեսակ-տեսակ շնորհներ, տուել է ձեզ աչք, ականջ, ձեռներ... որ նրանց գործ դնէք, նրանցով սովորէք, երգէք, գրէք, կարդաք...։ Ով Աստծու տուած շնորհները գործ կդնէ բարի բաների համար, նա էլ աւելի շնորհք կստանայ՝

առաջին երկու ծառաների նման, իսկ ով չվզործ դնի Աստծու շնորհը, եղածիցն էլ կզրկուի վերջին ծառայի նման:

### 9. ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Բեթանացի Ղազարոսը հիւանդ էր: Այդ ժամանակ Յիսուսը Գալիլիայումն էր: Նրա երկու քոյրերը՝ Մարիամը և Մարթան մարդուղարկեցին Յիսուսի մօտ ասելու, թէ քո սիրելի Ղազարոսը հիւանդ է, արի և բժշկի՞ր: Յիսուս, երբ այս բանը լսեց՝ ասաց. «Այն հիւանդութիւնը մեռնելու համար չէ»: Բայց մինչև նրա դալը, Ղազարոսը մեռաւ:

Երբ Յիսուս լսեց, թէ Ղազարոսը հիւանդ է, ասաց իւր աշակերտներին. «Եկէք գնանք Հրէաստան, մեր բարեկամ Ղազարոսը հիւանդ է»: Յիսուս երբ Բեթանիա եկաւ, արդէն չորս օր էր՝ որ թաղել էին Ղազարոսին: Ազգականներից շատերը երուսաղէմից եկել էին Մարիամի և Մարթայի մօտ՝ միիթարելու համար: Երբ Մարթան լսեց, թէ Յիսուս գալիս է, գնաց նրա առաջ, իսկ Մարիամը, տանը մնաց: Մարթան, երբ տեսաւ Յիսուսին, ասաց. «Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնի»: Երբ Յիսուս Մարիամին և նրա հետ եկող սգւորներին տեսաւ, որ լալիս էին, սիրտը լցուեց և ասաց. «Ո՞րտեղ էք թաղել ննջեցեալին»: Նրանք պատասխանե-

տացած եմ՝ հիմա էլ, եթէ Աստծուն խնդրես, որ իմ եղբօրը կենդանացնէ, քո խօսքին կլսէ»: Յիսուս ասաց նրան. «Քո եղբայրը յարութիւն կառնէ»: Մարթան ասաց. «Գիտեմ որ յարութիւն կառնէ վերջին դատաստանի ժամանակը, երբ բոլոր մարդիկն էլ յարութիւն կառնեն, բայց ես հիմա եմ ուզում: Յիսուս կրկնեց. «Ես եմ յարութիւն և կեանք տուողը, ով ինձ հաւատայ, եթէ մեռնի էլ, դարձեալ կապրի, դու հաւատում ես այս բանին»: Մարթան պատասխանեց. «Այս, Տէր, ես վաղուց եմ հաւատացել, որ դու ես Աստծու որդի Քրիստոսը»:

Մարթան այս խօսքից ետոյ գնաց և թաքուն Մարիամին ասաց. «Վարդապետը եկել է, կանչում է քեզ»: Մարիամը, երբ այս խօսքերը լսեց, շտապով գնաց Յիսուսի առաջ: Այն հրէաները, որոնք եկել էին սգաւորներին մխիթարելու, երբ տեսան, որ Մարիամը գնաց, իրանք էլ նրա ետևից գնացին՝ կարծելով թէ գնում է զերեզմանի վրայ լաց լինելու:

Մարիամը, երբ տեսաւ Յիսուսին, ոտներն ընկաւ և ասաց. «Տէր, եթէ զու այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնի»: Երբ Յիսուս Մարիամին և նրա հետ եկող սգւորներին տեսաւ, որ լալիս էին, սիրտը լցուեց և ասաց. «Ո՞րտեղ էք թաղել ննջեցեալին»: Նրանք պատասխանե-

ցին. «Տէր, արի և տեսօ: Յիսուս գերեզմանը որ տեսաւ, արտասուեց: Հրէաներն ասում էին. «Տեսնում էք ի՞նչպէս է սիրում նրան»: Մի



քանիսն էլ ասում էին. «Միթէ սա չէր կարող այնպէս անել, որ Ղազարոսը չմեռնէր»:

Յիսուս մօտեցաւ գեցեզմանին և ասաց. «Պեր առէք բերանի քարը»: Մարթան ասաց. «Տէր,

արդէն հոտած կլինի, որովհետեւ չորս օրուան թաղած է»: Յիսուս ասաց. «Մարթա, չասացի քեզ, որ եթէ հաւատաս, քո եղբայրը յարութիւն կառնէ»:

Քարը վեր առան, Յիսուս դէպի երկինք նայեց, ազօթեց և ասաց. «Հայր, շնորհակալ եմ քեզնից. դու ինձ միշտ լսել ես. ինդրում եմ այս անգամ էլ լսես և Ղազարոսին յարութիւն տաս, որ այս ժողովուրդը հաւատայ, թէ դու ես ուղարկել ինձ»: Այս ասաց և բարձր ձայնով կանչեց. «Ղազարնս, վեր կաց, դժւրս եկ»: Մեռելն իսկոյն դուրս եկաւ՝ ձեռներն ու ոտները պատանած, իսկ երեսը վարշամակով ծածկած: Յիսուս ասաց. «Արձակեցէք կապերը և թողէք, ոք գնայ»: Ղազարոսն իսկոյն վերկացաւ, սկսեց ման գալ: Մարիամի հետ եկած հրէաներից շատերը տեսան Յիսուսի արած հրաշքը և հաւատացին նրան:





## III

**10. ԱԲԳԱՐ ԹԱԳԱԻՈՒԾ ԴԵՍՊԱՆՆԵՐ Հ  
ՈՒՂԱՐԿՈՒՄ ՅԻՍՈՒԽԻ ՄՕՏ**

Հայոց Աբգար թագաւորն ապրում էր եղեսիա քաղաքում։ Սա եօթը տարի շարունակ բոռոտութիւնով հիւանդ էր։ Ամեն տեսակ դեղեր գործ էր զրել, բայց չէր առողջացել։ Աբգարը լսեց, որ Հրէաստանում Յիսուս առանց գեղերի բժշկում է ամեն տեսակ հիւանդութիւններ, այդ պատճառով նամակ զրեց և դեսպանների ձեռով ուղարկեց, որ գայ և իրան բժշկէ։ Ահա Աբգարի գրած նամակը. «Ես լսել եմ, որ դու առանց գեղի բժշկում ես հիւանդներին—կոյրերի աշքը բաց ես անում. խուլերին լսողութիւն. կաղերին ան ես տալիս. բորոտներին սրբումնեա. ամեն տեսակ հիւանդութիւն բժշկում ես և մինչև անդամ մեռեներին յարութիւն ես տալիս. Երբ ես այս ամենն իմացայ, ինքո ինձ ա-

սացի, որ դու կամ երկնքից իջած Աստուած ես, կամ Աստծու որդի։

Լսեցի նոյնպէս, որ հրէաները քեզ նեղացնում են. Աղաչում եմ, արի և բժշկիր ինձ։ Ես մի փոքրիկ քաղաք ունեմ, երկուսիս էլ բաւական է—քեզ այստեղ ոչ ոք չի նեղացնի»։

Նամակն ուղարկեց դեսպանների ձեռով և պատուիրեց, որ եթէ Յիսուս չգայ, պատկերը քաշեն և իրան բերեն։ Այս բանի համար մի նկարիչ էլ ուղարկեց նրանց հետ։

**11. ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ԲԵՐԱԾ ՊԱՏԱՌԻՑՆԵՐ**

Դեսպանները գնացին Երուսաղէմ և նամակը տուին Յիսուսին։ Նա չկարողացաւ գալ և մեր Աբգար թագաւորին այս պատասխանը գըրեց. «Երանի նրան՝ ով ինձ չի տեսել, բայց հաւատում է։ Գրում ես, որ քեզ մօտ գամ, չեմ կարող, որովհետեւ ես չեմ եկել հանգիստ ապրելու, այլ՝ չարշարուելու և խաչուելու։ Երբ այս բոլորը վերջացնեմ, հայր Աստծու մօտ պիտի գնամ։ Իսկ իմ աշակերտներից մինին կուղարկեմ, որ գայ և քեզ բժշկէ։

Երբ նկարիչը տեսաւ, որ Յիսուս չէ գալիս, սկսեց նրա պատկերը նկարել, բայց ինչքան աշ-

իստում էր, չէր կարողանում։ Յիսուս նկատեց  
այս բանը, նկարչին իւր մօտ կանչեց, մի կտոր  
մաքուր կտաւ առաւ, երեսին ծածկեց և նրա



վրայ նկարուեց իւր պատկերը։ Ետոյ նկարչին  
տուաւ, որ տանի Աբգարին։ Այս պատկերը կոչ-  
ւու է դաստառակ կամ անձեռազործ պատ-  
կեր։

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱԽՈՐԻՉՆԵՐԻ  
ԹԱԴԵՈՍ ԵՒ ԲԱՐԴՈՒՂԻՄՔՈՍ

Յիսուս բացի 12 առաքեալներից 72 աշա-  
կերտ էլ ունէր։

Յիսուսի պատուէրով՝ Համբարձումից ետոյ այդ  
աշակերտներից մինը՝ Թադէոս անունով, Հայաս-  
տան եկաւ Աբգարի մօտ։ Երբ սա պալատը մը-  
տաւ, թագաւորը երկրպագութիւն տուեց նրան։  
Թադէոսը քարոզեց թագաւորին, բոլոր քաղաքա-  
ցիներին և ասաց, որ թողնեն կուռքերն ու Քրիս-  
տոսին հաւատան և նրա ասածները կատարեն։  
Թադէոսը Աբգարի զլիին ձեռք զլեց, օրճնեց և  
բժշկեց՝ թէ թագաւորին և թէ եղեսխայի բոլոր  
հիւանդներին։ Այս բանը որ տեսան քաղաքացի-  
ները, հաւատացին Քրիստոսին, մկրտուեցան՝  
Քրիստոնեայ դարձան։

Սուրբ Թադէոսը երկար ժամանակ չմնաց այն-  
տեղ, նա առաքեալների նման պիտի զնար գա-  
նազան տեղեր և քարոզէր աւետարանը, այս  
պատճառով թագաւորի թագ շինող Ադդէին ե-  
պիսկոպոս ձեռնադրեց, հովիւ նշանակեց այս նոր  
քրիստոնեաների վրայ, որ նորից կռապաշտ չը-  
դառնան։ Թադէոսը Աբգարից հրաման առաւ և  
գնաց Վերին-Հայաստան՝ թագաւորի քրոջորդի

Սանատրուկի մօտ, քարողեց նրան և նրա մարդկանց ու ամենին էլ մկրտեց։ Սանատրուկի աղջիկ Յանդուխտը ևս քրիստոնեայ դարձաւ։



Սանատրուկը շատ կարճ ժամանակ քրիստոնեայ մնաց—երբ Աբգարը մեռաւ, նա ուրացաւ

քրիստոնէութիւնը, կուապաշտ դարձաւ և սկսեց Քրիստոսի հաւատացեալներին նահատակել։ Իւր Սանդուխտ աղջկանն էլ ստիպեց, որ ուրանայ քրիստոնէութիւնը, բայց նա պատասխանեց և



Յանդուխտ

առաց—ես կմեռնեմ, բայց կուոք չեմ պաշտի։ Սրա համար հայրը իւր աղջկանը նահատակել տուեց։ Սանատրուկը սրանով չբաւականացաւ։ Որովհետեւ Սանդուխտ կոյսը սուրբ Թաղէոսից էր ուսել քրիստոնէութիւնը, այս պատճառով ու-

սուցին էլ նահատակել տուեց Արտազ գաւառում:

Թաղէոս Առաքեալի մարմինը թաղուած է Արտազում, ուր մի գեղեցիկ վանք է շինուած, որ մինչև հիմայ էլ կայ—եկեղեցու անունն է թաղէոս Առաքեալ:



Այսպէս թէ ուսուցիչը՝ Թաղէոս առաքեալը և թէ աշակերտուհին լաւ համարեցին մեռնել՝ քան թէ ուրանալ Քրիստոսին և կուռք պաշտել:

Սուրբ Թաղէոսի մահից տասն և հինգ տարի

ետոյ՝ Բարդուղիմէոս առաքեալն ևս եկաւ Հայաստան, որ քրիստոնէութիւնը քարոզէ: Սա բերեց իւր հետ առաքեալներից ստացած Յիսուսի մայր Մարիամի պատկերը. Տիգրիս գետի ա-



Թաղէոս



Բարդուղիմէոս

փին մի վանք շինեց՝ Աստուածածին անունով և այդ պատկերը այնտեղ դրաւ:

Սուրբ Թաղէոս և Բարթուղիմէոս առաջին անգամ եկան մեր Երկիրը, քարոզեցին քրիստոնէ-

ութիւնը և լուսաւորեցին հայերին, սրա համար էլ նրանց անուանում ենք լուսատրիչներ։ Եւ որովհետև նրանք այդպիսի գեղեցիկ գործ են կատարել մեր պապերի համար, մենք էլ ամեն տարի տօն ենք կատարում եկեղեցում ու յիշում նրանց անունները։

Սուրբ Բարդուղիմէոսի գերեզմանը գտնուում է Աղքակ գաւառում, Նրա գերեզմանի վրայ ևս շինուած է մի վանք, որ մինչև այսօր էլ կայ և կոչւում է սուրբ Բարդուղիմէոսի վանք։

### 13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՄ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ

Ա.Ն.Ա.Կ. Գ.Ա.Լ.Ի.Ս է ՀԱՅԱՍՏԱՆ


**Պ**արսից թագաւորը չէր ուզում որ հայերը զօրեղ լինեն, ուզում էր նրանց երկրից մի կտոր խլել և իւր երկիրը մեծացնել, դրա համար պարսից Արտաշիր թագաւորը թշնամացել էր Հայոց Խոսրով թագաւորի հետ։ Մի օր նա իր պալատականների հետ այսպէս խօսեց—ով հայոց Խոսրով թագաւորին կապանի, ինչ պարզե կամենայ, կտանայ ինձնից։ Իշխաններից մինը՝

Անակ անունով՝ Խոստացաւ Արտաշիր ցանկութիւնը կատարել։ Սա վերցրեց իւր ընտանիքը, հասաւ Հայաստանի սահմանը և այնպէս ցոյց տուեց՝ որպէս թէ պարսից թագաւորն իրան հարածում է և մեր թագաւորից պաշտպանութիւն բննդրեց։ Խոսրովն Անակին սիրով ընդունեց։ Նա այնպէս էր կարծում, թէ փախստականը շատ տեղեկութիւններ կյայտնէ Արտաշիր զօրքի և նրա բոլոր գործերի մասին, այդ պատճառով Անակին հենց իւր պալատում տեղ տուեց։ Այնուհետև Անակը միայն նրա մասին էր մտածում, թէ ինչպէս սպանէ մեր թագաւորին։

### 14. ԽՈՍՐՈՎԻ ՄԱՀԸ

**Մ**ի օր Խոսրովը որսի գնաց իւր պալատաշանների հետ Մասիս սարի կողմերը, որտեղով Արաքս գետն է հոսում։ Անակին էլ հետն առաւ, Ռոսի ժամանակ Անակը Խոսրովին փոքր ինչ հեռու տարաւ՝ որպէս թէ ծածուկ բան ունի ասեցու։ Այստեղ սրով խփեց թագաւորին, իսկ ինքը ձի նստեց և սկսեց փախչել։ Մարդիկ ետեկից ընկան։ Անակը փախաւ, ձգեց իրան երավի գետը և խեղդուեց։ Խոսրովը դեռ չէր մեռել, որ հրամայեց Անակի ընտանիքը կոտորել։ Թագաւորի հրամանը կատարուեց—նրա ընտանիքը սրի անցրին։ Անակի որդկերանցից միայն մանուկ Գրի-

գորին Եւթաղ անունով մէկը՝ Սոփիա դայեակի  
հետ փախցրեց և տարաւ Կեսարիա քաղաքը:



Իշխանները կարողացան Խոսրովի երկու որդւոց  
ազատել—Տրդատին փախցրին Հռովմ քաղաքը,  
իսկ Խոսրովադիստին և թագաւորի գանձերը Օտա  
Ամատունի իշխանը տարաւ Անի ամրոցը:

### 15. Ս. ԳՐԻԳՈՐԸ ԿԵՍԱՐԻԱՅՈՒՄ

**Ս**ոփիան Գրիգորին պահում էր Կեսարիա-



յում: Նա ինքը քրիստոնեայ էր, ուստի մանկանն

էլ մկրտել տուաւ և անուանեց Գրիգոր։ Փոքը  
ինչ որ մեծացաւ, ուսումնարան ուղարկեց, ուր  
սովորում էր յունարէն և ասորերէն։ Որովհետև  
Սոփիան քրիստոնեայ էր, փոքրիկ Գրիգորին էլ  
ծանօթացրեց Քրիստոսի քարոզածների հետ, թէ  
մարդս ինչ պիտի անէ, որ բաղդաւոր լինի։ Քրիս-  
տոս ասել էր որ մարդիկ պէտք է մէկ մէկու  
սիրեն, իրար վատը չցանկան, ամենքն էլ եղ-  
բայրներ լինեն—սովորցրեց, ինչ որ հարկաւոր  
էր քրիստոնէական կրօնի համար։

Երբ Գրիգորը չափահաս դարձաւ, ամուսնացաւ  
Մարիամ անունով մի աղջկայ հետ և նրանից  
երկու որդի ունեցաւ Վրթաննէս և Արիստակէս։

Գրիգորին պատմեցին, որ իւր հայր Անակը<sup>1</sup>  
սպանել է Խոսրով թագաւորին, որի որդի Տըր-  
դատը Հռովմումն է, սրա համար էլ նա կամե-  
ցաւ գնալ այն քաղաքը, որ իւր մեղաւոր հօր  
փոխարէն Տըրդատի մօտ ծառայութիւն անէ և  
սրանով նրա մեղքերը փոքր ինչ թեթևացնէ։ Ե-  
րեք տարուց ետոյ սիրով բաժանուեց կնոջից։  
Մարիամը կուսանոց մտաւ, իսկ ինքը գնացէլը-  
ովիմ Տըրդատի մօտ։

#### 16. ՏՐԴԱԾԼ ՀՌՈՎՄՈՒԻՄ

Խորովի որդի Տըրդատն էլ Հռովմումն էր՝ մե-  
ծանում Դիոկղետիանոս կայսրի մօտ։ Երբ հա-



սակն առաւ, զինուորական ծառայութեան մէջ

մտաւ: Տրդատը մեծ ոյժ ունէր, լաւ ձի նստել գիտէր և զէնք գործածել: Մի անգամ ձեռով բռնեց եղան եղջիւրը և քաշեց, հանեց: Մի ուրիշ անգամ էլ ընկերի հետ կառք էին նստած: Ընկերը գիտմամբ Տրդատին վայրձգեց, բայց



նա վազեց և կառքի ետևից այսպէս բռնեց, որ ձիերն էլ չկարողացան առաջ գնալ:

Մի անգամ էլ Դիոկղետիանոս կայսրը պատերազմ ունէր: Թշնամու թագաւորը մարդ ուղարկեց և այսպէս էր առում, փոխանակ զօրքով մէկ մէկու առաջ կռուելու և իզուր տեղը մարդիկ սպանելու, արի ես ու դու մենամարտենք: Եթէ ես յաղթեմ, դուք ամենքդ ինձ ծառայ եղէք, իսկ եթէ դու յաղթես, մենք քեզ հարկ տանք:

Դիոկղետիանոսը խիստ վախեցաւ և չգիտէր, թէ ինչ անէ: Կայսրի զօրավարներից մէկն աւաց. «Տէր թագաւոր, ամենեին մի մտածիր այդ մասին, հայոց թագաւորի որդի Տրդատը, որ իմ գնդում ծառայում է, կարող է քեզ ազատել» և Տրդատի քաջութեան մասին շատ բաներ պատմեց:

Դիոկղետիանոսն իսկոյն Տրդատին իւր—մօտ կանչել տուաւ, թագաւորական զգեստ հազցըեց, թագաւորի նշաններով զարդարեց և ամեն տեղ յայտնեց, թէ նա կայսրը ինքն է: Ետոյ Դշնամու մօտ մարդ ուղարկեց և յայտնեց, որ վազը կարող է մենամարտել:

Երկրորդ օրը Տրդատը ձի նստեց, քշեց թշնամու կողմը, յարձակուեց նրա վրայ, բռնեց և




Դիոկղետիանոսի մօտ բերեց։ Կայսրը չափից  
գուրս ուրախացաւ և երբ իմացաւ, որ իրան ա-  
զատողը հայոց թագաւոր Խոսրովի որդին է, թա-  
գաւորական զգեստ հագցրեց, զիսին թագ գրեց-  
զօրք տուեց, որ գնայ Հայաստան, պարսիկներին  
գուրս անէ և իւր հօր փոխարէն թագաւորէ։



Խոսրովագուխտ

Տրդատը հասաւ կեսարիա քաղաքը. հայ նա-  
խարարները դիմաւորեցին նրան։ Գրիգորը և  
Տրդատի հետն էր։ Հայ նախարարները երբ ի-  
մացան, որ իրանց թագաւորի որդին զօրքով գա-  
լիս է, եկան, միացան նրա հետ, որ պարսիկնե-  
րին գուրս անեն մեր երկրից։

Օտա Ամատունին Խոսրովի գանձերը և Խոս-  
րովագուխտին բերաւ, յանձնեց Տրդատին։



17. Ա. ԳՐԻԳՈՐԻՆ ԶԳՈՒՄ ԵՆ ԽՈՐ-ՎԻՐԱՊԸ


Տրդատը մտաւ Հայաստան և հասաւ Երիզաքաղաքը, Այստեղ էր կուապաշտ հայերի աստուածուհի Անահատի արձանը, որին մեր պապերը պաշտում էին, Թագաւորը Անահատին զոհ բերեց և խնդրեց, որ յաջողութիւն տայ իր գործին: Թէ նա և թէ բոլոր զինուորները Երկրպագութիւն էին տալիս և ծաղիկներից պոսկէին զուռքի կուռքի տուած: Հերթը Գրիգորին հասաւ:

Տրդատը հրամայեց, որ նա էլ ազօթէ Անահատին: Բայց Գրիգորը քրիստոնեայ էր, չուզեց կուռքին Երկրպագութիւն տալ: Տրդատը բարկացաւ Գրիգորի վրայ և հրամայեց, որ անպատճառ Անահատի տուած ազօթէ: Գրիգորը չուզեց: Այն ժամանակ հայոց Տաճատ իշխանը թագաւորին պատմեց, թէ նա իւր հօրը սպանող Անակի որդին է: Տրդատն աւելի ևս բարկացաւ, հրամայեց Գրիգորին խիստ պատիժներ տալ—պատուիրեց, որ տանեւ Յըտաշատ քաղաքի Խոր-Վիրապը՝ ոտորերկրեայ բանտը ձգեն, որպէսզի սովից մեռնէ: Այս բանտը լի էր օձերով և կարիճներով: Գրի-



գորը 15 տարի մնաց այնտեղ: Մի քրիստոնեայ կին Աստծու հրամանով ամեն օր մի մի հաց էր ձգում բանտը, որ Գրիգորն ուտէ և չմեռնէ:

Այստեղ, ուր Գրիգորը 15 տարի բանտում մնաց, մի վանք կայ շինած՝ Էջմիածնի մօտերքում. Վանքի անունն է Խոր-Վիրապ:



Խոր-Վիրապ

Տրդատը մտաւ Հայաստան, դուրս արեց պարսիկներին և ինքն սկսեց կառավարել: Թագաւորը կուապաշտ էր, հրաման հանեց, որ իւր տէրութեան մէջ կուռքերին Երկրպագութիւն տան, իսկ քրիստոնեաներին սպանեն:

18. ՀԹԻՓՍԻՄԵԱՆ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆ ԿԱՅԱԵՐԸ  
ՓԱԼԿՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Գիոկեատիանոս կայսորը կամենում էր ամուս-



նանալ։ Ամեն կողմ  
պատկերահաններ ու-  
ղարկեց, որ թագուհի  
լինելու արժանի գե-  
ղցիկ աղջիկներ զբա-  
նեն. Նրանց պատկեր-  
ները նկարեն և ի-  
րեն բերեն։ Այս պատ-  
կերահաններից մի քա-  
նիսն էլ Հռոմ քաղաքի  
մօտ գտնուող կուսա-  
նոցը գնացին։ Այսուղ  
մի գեղեցիկ կոյս կար  
անունը Հոփփոփմէ, որ-  
քա պատկերն ուժով  
քաշեցին և կայսրին  
տարան։ Կայսրը հա-  
ւանեց Հոփփոփմէին և  
ուզում էր նրա հետ  
ամուսնանալ։

Երբ այս բանն իմա-  
ցաւ կուսանոցի մայ-  
րապետ Փայխանէն, բո-  
լոր կոյսերին հաւա-  
քեց և Հոփփոփմէի հետ  
միասին փախան Հա-



յաստան և Վաղարշա-  
պատ քաղաքի մի այ-  
գու հնձանում բնակ-  
ուեցին։ Կոյսերից մի-  
նը ապակէ յուլունք-  
ներ էր շինում. ծա-  
խում էին և որանով  
ապում։

Դիոկղետիանոսը  
խիստ բարկացաւ կոյ-  
սերի վրայ, ամեն կողմ  
մարդ ուղարկեց, որ  
նրանց գտնեն։ Երբ ի-  
մացաւ, որ Հոփփոփ-  
մէն Հայաստան է փա-  
խել, մեր Տրդատ թա-  
գաւորին մի նամակ  
գրեց, որի մէջ ասում-  
էր. «Եթէ կոյսերին  
գտնես, Հոփփոփմէին  
ինձ ուղարկիր, իսկ  
միւսներին սպանիր։  
Բայց եթէ ցանկանաս,  
կարող ես գու ևս ա-  
մուսնանալ Հոփփոփ-  
մէի հետ։

## 19. ԿՈՅՄԵՐԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

**Տ**րդատն այս թուղթը ստանալուն պէս՝ իւր երկրի մէջ ամեն կողմ մարդ ուղարկեց, որ վնասուն նրանց։ Մի քանի օրից ետ կոյսերին գտան Վաղարշապատի հնձանում, Թագաւորը հրամայեց հնձանը զինուորներով պատել։ Երբ պատմեցին Հռիփսիմէի գեղեցկութեան մասին, պալատից թանկագին շորեր ուղարկեց, որ հագցնեն նրան և իւր մօտ բերեն։ Հռիփսիմէն չէր կամենում պալատ գնալ, բայց թագաւորը հրամայեց ուժով բերեն։ Թագաւորի հրամանը կատարուեց— Հռիփսիմէին քաշ տալով մինչև պալատ տարան։ Թագաւորը տեսնելով նրա գեղեցկութիւնը, ուղեց ինքը նրա հետ ամուսնանալ, հրամայեց հարսանիքի հանդէս կատարել—պարել և երգել բայց Հռիփսիմէն ոչ մի պայմանով չհամաձայնեց թագուհի դառնալ։ Նա փախաւ, գնաց իւր ընկերունիների մօտ պատմեց նրանց իւր գլխովն անցածը, փոքր ինչ հեռացաւ նրանցից և սկսեց Աստծուն աղօթել և շնորհակալութիւն անել, որ իրան աւշպիսի վտանգից աղատեց։ Այդ միջոցին թագաւորի դահճաները եկան, բոնեցին Հռիփսիմէին. լեզուն կտրեցին. աչքերը հանեցին ու մարմինը կտոր-կտոր արին, ասելով. «Ով թագաւորի հրամանը չի կատարի, այսպէս կպատ-

ժուի»։ Հռիփսիմէից ետոյ սպանեցին նրա 35 լները ունիներին մայրապետի հետ միասին,



## 10. Ս. ԳՐԻԳՈՐԻՆ ԴՈՒՐՄ ԵՆ ԲԵՐՈՒՄ ՎԻՐԱՊԻՑ

**Կ**ոյսերին սպանել տալուց ետոյ՝ թագաւորն այս բանի վրայ շատ էր մտածում—նրա խիդաը տանջում էր իրան, հանգիստ չունէր, քունը չէր տանում։ Նա խելագարի պէս վայրենի խոզի նման թափառում էր եղէզների մէջ։ Թագաւո-

ըի քոյր Խոսրովադուխտը մի բարի աղջիկ էր: Հրեշտակը սրան երազում երևաց և ասաց. «Եթէ կամենում էք թագաւորն առողջանայ, Գրիգորին Վիրապից հանէք, նա միայն կարող է բժշկել հիւանդին»: Խոսրովադուխտն այս երազը պատմեց նախ արարներին: Նրանք սկզբում չըհաւատացին — ամենեին չէին կարծում, թէ Գրիգորը 15 տարի Վիրապում կենդանի մնացած կլինի: Բայց երբ նոյն երազը երեք անգամ կրկնուեց, ետոյ հաւատացին:

Այնուհետև Խոր-Վիրապ գնացին, չուանը կախ արին և ձայն տուին. «Գրիգոր, եթէ կենդանի ես, դուրս արի, Աստուած հրամայեց, որ քեզ այստեղից հանենք»: Գրիգորը կենդանի էր: Նրան դուրս հանեցին և Վաղարշապատ բերին: Տրդատը և նախարարները Գրիգորի ոտներն էին ընկնում և ներողութիւն խնդրում: Գրիգորն աղօթեց Աստծուն, բժշկեց հիւանդ թագաւորին և օրհնեց նախարարներին:

Յ Սրանից ետոյ փողոցներում թափուած կոյսերի մարմինները թաղել տուեց: Տրդատը մշակի նման ինքն էր գերեզմանները փորում, իսկ թագուհին ու քոյրը փեշերով հող էին հանում:

Երկրորդ օրը նախարարները թագաւորի հետ Գրիգորի մօտ եկան և խնդրեցին, որ ծանօթացնէ իրանց Քրիստոսի հետ: Գրիգորը շատ ուրա-




խացաւ այս բանի վրայ և 66 օր շարունակ քարոզում, ուսուցանում էր նրանց քրիստոնէական հաւատը հընձանի մէջ։

## 21. Ս. ԳՐԻԳՈՐԸ ԿԱԹՈՂԻԿՈՍ Է ԴԱՌՆՈՒՄ

**Տ**րդատը, իշխանները և բազմաթիւ ժողովուրդ հաւատացին Քրիստոսին և ընդունեցին քրիստոնէութիւնը, բայց ոչ քահանայ ունէին և ոչ եպիսկոպոս, որ քարոզէին, սովորցնէին և մկրտէին նրանց։ Կեսարիա քաղաքում մի եպիսկոպոս կար՝ անունը Ղեռնդ, Գրիգորին ուղարկեցին նրա մօտ, որ կաթողիկոս ձեռնադրէ, որպէսզի նոր քրիստոնեայ դարձած հայ ժողովը գին մկրտէ և սովորեցնէ քրիստոնէութիւնը։ Գրիգորը 16 մեծամեծ նախարարների ուղեկցութեամբ, արքունական կառքով, թագաւորի ընծաներով ու Տրդատի թղթով կեսարիա գնաց։ Ղեռնդը Գրիգորին կաթողիկոս ձեռնադրեց։ Վերադառնալիս Ս. Յովհաննէս Մկրտչի և Աթանագինէ եպիսկոպոսի մասունքների մի մասը հետնառած, ուրծաւ Մուշ քաղաքի կողմերը։ Նա հետը բերեց և շատ քահանաներ, որ իրան օգնեն։

Երբ հասաւ Մուշ քաղաքը, տեսաւ այնտեղ շատ կռատներ՝ մեհեաններ կային։ Բոլորն էլ քանդեց—կուռքերի սեղանները՝ բագիները կործա-

նեց, նրանց տեղ եկեղեցի շինեց և Յովհաննէս Մկրտչի մասունքն այնտեղ դրեց։ Այս եկեղեցին սուրբ Կարապիտ անուանեց, ուր մինչև այ-



սօր էլ անթիւ ուխտաւորներ են գնում։ Իր հետ եղող 16 նախարարներին և այնտեղի ժողովրդին մկրտեց։ Հետը բերած քահանաների մի մասը այնտեղ թողնելով, ինքը եկաւ Այրարատ։

22. Ա. ԳՐԻԳՈՐԸ ՄԿՐՏՈՒՄ է ՏՐԴԱՑԻՆ  
ԵՒ ԼՈՒՍԱՀԱՐՈՒՄ է ՀԱՅԱՍՏԱՆԸ

Տրդատը, երբ իմացաւ, որ Ա. Գրիգորը Վա-  
ղարշապատ քաղաքին մօտեցել է, դուրս եկաւ  
նրա առաջ նախարարների, իշխանների և ժողո-  
վըրդի հետ միասին։ Նրանք Բագաւանում պա-  
տահեցին իրար։ Այստեղ Ա. Գրիգորը քարոզեց  
և 30 օր ծոմ և պաս պահել տուեց նրանց։ Ե-  
առյ թագաւորին, նրա ընտանիքին, իշխաններին,  
զօրքին և անթիւ ժողովրդի մկրտեց Եփրատ գե-  
տում։ Ա. Գրիգորը Շ օր մնաց այնտեղ և չորս  
միլիօնից աւելի մարդ մկրտեց։ Բագաւանից ան-  
թիւ մկրտուածների հետ եկան Վաղարշապատ։

Սրանից ետոյ Ա. Գրիգորը քրիստոնէութիւնը  
զօրացնելու համար Տրդատին խորհուրդ տուեց,  
որ Հայաստանում ամեն տեղ ուսումնարաններ  
բանայ, քահանաներ պատրաստէ, որ մնացած հե-  
թանոս ժողովրդին քարոզեն և մկրտեն։ Ուսում-  
նարաններից մի քանիսում յունարէն, մի քանի-  
սումն էլ ասորերէն էին սովորցնում, որովհետեւ  
դեռ ևս հայերէն գրեր չկային։ Այստեղից աւար-  
տածները քահանաներ էին դառնում և հայերին  
հետզհետէ քրիստոնեայ դարձնում։

Բացի սրանից սուրբ Գրիգորը տասներկու ե-  
պիսկոպոս ձեռնադրեց հայերի համար։



Նա մեր Երկիրը լուսաւորեց և դրա համար էլ



Նրան ասում ենք Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ:

Սուրբ Գրիգորը եղաւ մեր առաջին եպիսկոպոսապետը՝ հայրապետը՝ կաթողիկոսը:


Ա. Գրիգորին պատուելու համար տարին երեք տօն ժնք կատարում—մինը Մեծ-Պատի հինգերորդ շաբաթ օրը, իսկ երկուսը Հոգեգալստից ետոր:

### 23. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՏԵՍԻԼԸ

Սուրբ Գրիգոր Լուսաւորչին մի անգամ տեսիլքում երևաց, որ երկինքը բացուեց և սկսեց այնտեղից լոյս իջնել գէպի երկիրը։ Լուսի հետ միասին իջաւ Աստծու միածին որդին՝ ձեռքին բռնած ոսկէ ուռն (մուրճ)։ Այս մարդն իջաւ վաղարշապատ քաղաքի մէջ տեղը և գետնին ուռով խփեց։ Իսկոյն գետնի տակից՝ այսինքն անտընդից սարսափելի ձայներ լսուեցին։ Սրանից ետոյ տեսաւ թագաւորի պալատի վրայ ոսկէ խարիսխ (1), որի մեծութիւնը մի մեծ բլրի չափ էր։ Այս խարսխի վրայ կրակէ սիւն կար (2), սիւնի վրայ՝ եկեղեցու ձեռվ ամպեղէն զըմբէթ (3), իսկ զմբէթի վրայ էլ՝ լուսաւոր խաչ (4):

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը զարմացած նայում էր և չգիտէր, թէ ինչ նշանակութիւն ունեն այս ամենը։ Աստծու հրեշտակն իջաւ երկնքից և մեկնեց սուրբ Գրիգորին նրա տեսիլք։

Հրեշտակն ասաց—նա, որ ձեռին ոսկէ ուռն ու-  
նէր բռնած, Աստծու միածին որդին՝ Յիսուս




Քրիստոսն է: Հրեղէն սիւնը այն տաճարն է, որ  
այստեղ պիտի շինուի, իսկ լուսաւոր խաչը՝ հա-

յոց կաթողիկոսութիւնն է: Հրեշտակը յայտնեց,  
որ այս ուռով խփած տեղը եկեղեցի պիտի շի-  
նել: Այստեղ պիտի ազօթեն բոլոր հայ քրիստո-



նեաները. հայոց կաթողիկոսի աթոռն այստեղ  
պիտի հաստատուի, այսինքն հայոց կաթողիկոս-  
ներն այստեղ պիտի նատեն:



## 24. ԷՇՄԻԱԾՆԻ ՏԱՅԱՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆՆ

Ու իւս օրը սուրբ Գրիգորը պատմեց այս տեսիլը Տրդատթագաւորին, նախարարներին, ժողովրդին և պատուիրեց, որ հրեշտակի ցոյց տուածտեղի չորս կողմը քարէ պատ շինեն:


Սուրբ Գրիգորն այդ երազը տեսել էր թագա-



Աշուան

ւորին և նախարարներին մկրտելուց առաջ: Երբ թագաւորական տունը և ժողովրդին մկրտեց, Վաղարշապատ դարձաւ և Միածնի իջած տեղում՝ 303 թուին մի եկեղեցի շինել տուաւ այն ձևով՝


ինչպէս որ տեսիլքում երևացել էր։ Այս եկեղե-



Գալիսանէ

ցին առաջ կաթողիկէ՝ Շողակաթ էր կոչում, ու  
բովհետեւ լոյսը, այսինքն շողը այստեղ կաթեց։


Այժմ այլ ևս Շողակաթ չեն ասում, այլ՝ Էջմի-  
ածին, որ նշանակում է, թէ այստեղ իջաւ Մի-  
ածինը՝ Յիսուս Քրիստոսը։ Եկեղեցու շինութեան  
վրայ աշխատում էին ոչ միայն ժողովուրդը՝ այլև



Հոփափակ

Թագաւորն ինքը, Աշխէն թագուհին, թագաւորի  
որդին, Խոսրովագուխտ քոյրը, նախարարներն  
ու իշխանները։ Բացի էջմիածնից Լուսաւորիչը  
երեք եկեղեցի էլ շինեց՝ մինը Գայիանէ կուսի

անունով, միւսը Հռիփսիմէի և սրանցում թաղեց  
նրանց մարմինները, իսկ երրորդ եկեղեցին հնձա-  
նի տեղում շինեց, որ այժմ կոչւումէ Շողակաթ։



Հնձանի Շողակաթ

Սուրբ Էջմիածինը բոլոր հայերի մայր եկեղե-  
ցին է։ Այստեղ է նստում հայոց կաթողիկոսը։

Սուրբ Էջմիածնի հիմնարկութիւնը մեր եկեղեցին  
տօնում է Հռոգեղալստից 2 շաբաթ ետու։

### ՇԱՐԱԿԱՆ Ս. ԷՉՄԻԱԾՆԻ

Էջ Միածինն ի Հօրէ  
Եւ լոյս փառաց ընդ նմա,  
Զայնք հնչեցին  
Սանդարամետք անկնդոց։

Միածինը լուսով պատած իջաւ երկնքից։  
Սանդարամետից, այսինքն դժոխքի անդնդից  
ձայներ լուսեցան։

Տեսեալ զլոյս  
Մեծ հայրապետին Գրիգորի,  
Պատմէր ցնծութեամբ  
Հաւատացեալ արքային։

Մեծ հայրապետ Գրիգորը, երբ լոյսը տեսաւ,  
ուրախ ուրախ պատմում էր նոր քրիստոնեայ  
դարձած թագաւորին։

Եկայք շինեացուք  
Սուրբ զխորանն լուսոյ,  
Քանզի ի սմա ծաղեաց մեզ լոյս  
ի Հայուստան աշխարհի։

Եկէք այստեղ լուսոյ խորանը, այսինքն եկե-

զեցի շինենք, որովհետեւ Հայաստան աշխարհի  
մէջ այստեղ լոյս ծագեց մեղ համար:

### ՏԱՐՆ ՊԱՏՈՒԻԲԱՆ

1. Քո Տէր Աստուածը ես եմ,
2. Կուռք չշինես և չպաշտես,
3. Աստծու անունը զուր տեղը չի շնորհած,
4. Շարաթ օրը սուրբ պահիր,
5. Հօրդ ու մօրդ պատուիր,
6. Ոչ ոքի չսպանես,
7. Շնութիւն չանես,
8. Գողութիւն չանես,
9. Սուտ զկայութիւն չտաս,
10. Ուրիշ ունեցածի վրայ աչք չունենաս:



ԻՄ ԱՇԽԱՏԱՍԻՐԱԾ ԿՐՈՆԻ ԴԱՍԱԳՐԵՐԸ

I. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՍՅՈՐԻՆ ԵՐԵՎԱՆ		ԳԻՒՆ Է	ԶԵՂՋ
		Բ.	%
1. Ուղեցոյց Հին-Ուխտի մասն Ա.	.	80	25
2. Ուղեցոյց Հին-Ուխտի մասն Բ.	.	85	25
3. Ուղեցոյց Նոր-Ուխտի մասն Ա.	.	1	"
4. Ուղեցոյց Նոր-Ուխտի մասն Բ.	.	1	5
5. Դասագիրք կրօնի հատ. Դ.	.	1	50
6. Դասագիրք կրօնի հատ. Ե.	.	"	50
7. Տասն պատուիրան	.	"	50
ՄԻՃԻՆ ԵՐԵՎԱՆ			35

II. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա. Ծխական դպրոցների համար			
8. Դասատեար կրօնի Ա. տարի.	.	"	25
9. Դասատեար կրօնի Բ.	.	"	25
10. Դասատեար կրօնի Գ.	.	"	30
11. Դասատեար կրօնի Դ.	.	"	30
			25
բ. Պետական դպրոցների համար			
12. Դասատեար կրօնի Ա. տարի	.	"	25
13. Դասատեար կրօնի Բ. տարի	.	"	25
14. Դասատեար կրօնի Գ. տարի	.	"	30
գ. Ծխական եւ պետական դպր. համար			
15. Հին-Ուխտ	.	"	55
16. Նոր-Ուխտ	.	"	50
17. Գործք-Առաքելոց	.	"	45
			25
դ. Տաճկանայ դպրոցների համար			
18. Հին-Ուխտ	.	"	45
19. Բարուախոսութիւն (էթիկա)	.	"	50
20. Մի քանի խօսք հայ կրօնուազներին	.	"	10
			35

ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՍԵԼ

1. Խնձ—Սահակ ա. քչ. Սահակեանց. Բեբուտովա յն. № 52
2. «Դիր» և հայ գրավաճառներին:

Գինն է 25 կու.

ՀՀ Ազգային գրադարան



NL0026882

434

2013

0026882

